Ասլանը մնաց սառն եւ անխռով: Նա, բժշկի հոգածութեամբ, մի գուցէ ծերունուն հարոածք պատահի, բաժանեց նրանց միմեանցից եւ օգնեց ծերունուն նստել իր տեղը:

Երիտասարդը դարձեալ բաց չէր թողնում ծերունուն, համբուրում էր նրա ալեւոր գլուխն ու ձեռքերը, համբուրում էր նրա այրած, խարած ճակատը, անդադար կրկնելով.

— Տէ՛ր աստոած... ո՛վ կսպասէր...

— Մուրադ, սիրելի զաւակս, — խօսեց ծերունին, երբ փոքր-ինչ հանգստացաւ, — դու դարձեալ գտնում ես ինձ մի պախարակելի դերի մէջ եւ իրաւունք ունես մտածելու, որ հին խաչագողը, հին չարագործը, տակաւին չէ ուղղոել... Ա՛խ, եթէ գիտենայիր, թէ ի՞նչ հանգամանքներ հարկադրեցին ինձ այդ ամօթալի խարդաւանքը յանձն առնել, դու կը ներէիր ինձ, դու բարի ես, Մուրադ, դու կը ներէիր ինձ...

— Եւ կը սիրէր ձեզ... — աւելացրեց Ասլանը:

Երիտասարդը կրկին առեց ծերունու աջը եւ, իր շրթունքներին սեղմելով, ասաց.

— Այո՛, կը սիրէի ձեզ... եւ սիրում եմ... Ես այժմ հասկանում եմ բոլորը... ամէն ինչ պարզ է ինձ համար... Ոչինչ բարեգործութիւն չէր կարող մոռանալ տալ քո տխուր անցեալը... Ոչինչ ապաշխարութիւն չէր կարող քաւել քո հին մեղքերը... Իսկ այժմ բոլորը պէտք է սրբոած համարել... Այդ անձնազոհութիւնը, որ դու յանձն ես առել մի մեծ նպատակի համար, կմաքրէ քո հին յանցանքները:

— Իմ հին յանցանքները՛... — կրկնեց ծերունին արտասուքը սրբելով: — Միթէ՞ երկինքը կարող էր բովանդակել իր մէջ այնքան գթութիւն, այնքան ողորմածութիւն, որ բաւական լինէր ներելու ինձ նման եղեռնագործին... Ես վաղուց զղջացել եմ... Բայց առանց թողութիւն սպասելու... Այն մխիթարական յոյսը, որ ամէն մի բարի քրիստոնեայ ունի ապագայ կեանքի համար, իմ մէջ մեռած է... Թո՛ղ դժոխքը՛ լինի իմ տեղը... թո՛ղ դեւերի եւ սատանաների հետ լինի իմ յաւիտենական կենակցութիւնը... Թո՛ղ մի նոր յանցանք եւս բարդոի իմ բազմաթիւ մեղքերի հետ... Բայց ես կը կատարեմ... անպատճառ կը կատարեմ, ինչ որ ուխտել եմ...

Ասլանը բռնեց նրա ձեռքը եւ գոհունակութեամբ սեղմեց: Նրա օրինակին հետեւեց եւ երիտասարդը:

Երեւում էր, որ ծերունու եւ երիտասարդի մէջ հին կապեր կային եւ բոլորովին մթին ու մռայլ կապեր... Ես առաջ երիտասարդին նրա որդու տեղ